


ՌՀՀ Իրավունքի Ինստիտուտի

Գիտական Խորհրդի

որոշումը հաստատված



Նախագահ

Ռ. Բաբայան Ս. Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Իրավունքի Ինստիտուտ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ
(2025-2026 ուսումնական տարի)

Երևան

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

Ուսամնական պրակտիկան (կուրսային աշխատանքների պատրաստումը) ուսանողի արտադրական պրակտիկայի տեսակ է:

Կուրսային աշխատանքը արդիական իրավական խնդիրներից մեկին նվիրված ինքնուրույն տեսական և կիրառական (եմպիրիկ) հետազոտություն է, որի իրականացման ընթացքում ուսանողը ձեռք է բերում անհրաժեշտ տեսական գիտելիքներ, ինչպես նաև գործնական հմտություններ և կարողություններ, որոնք նրան հնարավորություն են տալիս ապագայում ինքնուրույն լուծելու մասնագիտական խնդիրներ: Աշխատանքը պետք է ունենա տրամաբանորեն ավարտուն բնույթ և ցույց տա ուսանողի կարողությունը՝ գրագետ ներկայացնելու մտքերը, հիմնավորելու առաջարկները և ազատորեն օգտագործելու մասնագիտական տերմինաբանությունը:

Կուրսային աշխատանքը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

- լինի ինքնուրույն,
- կրի հետազոտական-վերլուծական բնույթ,
- ուղղված լինի գործնական նշանակություն ունեցող կոնկրետ իրավական խնդրի բացահայտման և/կամ լուծման,
- պարտադիր ներառի իրավակիրառ պրակտիկայի նյութերի վերլուծություն¹,
- նյութի տրամաբանական և հստակ շարադրման, ավարտունության, ապացուցողականության և արժանահավատության պահանջներին համապատասխանության,
- կոռեկտ ձևակերպված լինի (ունենա հստակ կառուցվածք, մատենագիտական հղումների և օգտագործված աղբյուրների ցանկի պատշաճ ձևակերպում):

Կուրսային աշխատանքը կատարվում է ուսանողին տրված կոնկրետ անհատական առաջադրանքի հիման վրա , որը կազմում է ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմից նշանակված գիտական ղեկավարը: Առաջադրանքը արտացոլվում է կուրսային նախագծի խնդիրներում:

Կուրսային աշխատանքը պետք է բաղկացած լինի հետևյալ հիմնական տարրերից՝

- տիտղոսաթերթ (տես Հավելված 1).
- բովանդակություն (տես Հավելված 2).
- նշանագրեր և կրճատումներ (առկայության դեպքում).
- ներածություն.
- հիմնական մաս՝ բաղկացած գլուխներից և ենթագլուխներից (տեսական և գործնական մաս).

¹Այն կուրսային նախագծերը, որոնք չեն պարունակի իրավակիրառ պրակտիկայի վերլուծություն, չեն կարող ներկայացվել հանրային պաշտպանության:

- եզրակացություն.
- օգտագործված աղբյուրների ցանկ (տես Հավելված 3).
- հավելվածներ (առկայության դեպքում):

Աշխատանքի կառուցվածքային տարրերի անվանումները նշվում են **բովանդակությունում**:

Ներածությունում անհրաժեշտ է արտացոլել՝

- թեմայի ընտրության հիմնավորումը և դրա արդիականությունը.
- թեմայի գիտական մշակվածության աստիճանի բնութագրումը մասնագիտական գրականությունում.
- գիտական ղեկավարի առաջադրանքի համատեքստում նշել աշխատանքի հիմնական նպատակը և խնդիրները.
- հետազոտության օբյեկտը և առարկան.
- հետազոտության մեթոդները:

Կուրսային նախագծի **հիմնական մասը** ենթադրում է հետազոտվող հարցի վիճակի համակարգված և համալիր ներկայացում:

Տեսական մասում պետք է արտացոլվի ուսանողի կարողությունը՝ համակարգելու տվյալ խնդրի վերաբերյալ առկա գիտական մշակումներն ու տեսությունները, քննադատորեն դիտարկելու դրանք, առանձնացնելու էականը, գնահատելու այլ հետազոտողների փորձը, որոշելու թեմայի ուսումնասիրվածության հիմնական ուղղությունները ժամանակակից մոտեցումների տեսանկյունից և հիմնավորելու սեփական դիրքորոշումը:

Գործնական մասը պետք է **պարունակի կուրսային նախագծի թեմայի վերաբերյալ իրավակիրառական պրակտիկայի նյութերի վերլուծություն**:

Գործնական մասը հաջողությամբ իրականացնելու նպատակով՝ գիտական ղեկավարի առաջադրանքին համապատասխան, ուսանողներին առաջարկվում է օգտագործել՝

- դատական պրակտիկայի վերլուծության մեթոդը (դատական ակտերի հավաքագրում և դասակարգում, օրինաչափությունների բացահայտում և այլն),
- դատական ակտերի տեքստի վերլուծության մեթոդը,
- համեմատախրավական մեթոդը. տարբեր դատարանների կամ տարբեր իրավասությունների որոշումների համեմատման միջոցով հնարավոր է բացահայտել իրավակիրառական պրակտիկայում առկա տարբերություններն ու նմանությունները: Այս մեթոդը հնարավորություն է տալիս որոշելու, թե որ գործոններն են ազդում իրավակիրառական որոշումների զարգացման վրա,
- սոցիոլոգիական մեթոդները (հարցաթերթում, հարցազրույց, դիտարկում, ֆոկուս-խմբեր և այլն),

- պատմական վերլուծություն. դատական պրակտիկայի ուսումնասիրությունը դրա պատմական զարգացման համատեքստում հնարավորություն է տալիս բացահայտելու օրենքների մեկնաբանության փոփոխությունները և իրավակիրառական մոտեցումների էվոյուցիան:

Դատական պրակտիկայի վերլուծությունը **չի ենթադրում** քննարկվող դատական ակտերից մեջբերումների պատճենում (copy paste) և ներառում կուրսային նախագծում, այլ՝ ուղղված է եզրահանգումների ձևակերպմանը և ուսանողի սեփական դիրքորոշման ներկայացմանը:

Կուրսային նախագծի **եզրակացությունում** պետք է արտացոլվեն հետևյալ ասպեկտները՝

- տեսական և էմպիրիկ նյութի վերլուծության հիման վրա ստացված հիմնական եզրահանգումների ձևակերպումը.
- ստացված արդյունքների գործնական կիրառման հնարավորությունը:

Եզրահանգումները պետք է պարունակեն առաջադրված նպատակներին և խնդիրներին արդյունքների համապատասխանության գնահատում:

Օգտագործված գրականության ցանկը պետք է արտացոլի այն աղբյուրները, որոնք կիրառվել են կուրսային նախագծի պատրաստման ընթացքում, և ձևավորվի սահմանված կանոններին համապատասխան:

Կուրսային նախագծի գիտական **ղեկավարը** **ղեկավարում է ուսանողի աշխատանքը նախագծի պատրաստման և գրելու բոլոր փուլերում** (թեմայի ընտրության, բովանդակության և աշխատանքի իրականացման հաջորդականության վերաբերյալ խորհրդատվություն է տրամադրում, ձևակերպում անհատական առաջադրանքը, աջակցում անհրաժեշտ աղբյուրների ընտրությանը և հետազոտության մեթոդների ընտրության հարցում խորհրդատվության տրամադրում) մինչև վերջինիս պաշտպանությունը:

Ուսանողը պարտավոր է կուրսային նախագծի պատրաստման բոլոր փուլերում համաձայնեցնել միջանկյալ արդյունքները գիտական ղեկավարի հետ և հաշվի առնել նրա առաջարկներն ու դիտողությունները:

Աշխատանքի **վերջնական (ավարտուն) տարբերակը** գիտական ղեկավարին պետք է ներկայացվի ոչ ուշ, քան հանրային պաշտպանության օրվանից 14 օր առաջ:

Առանց գիտական ղեկավարի ստորագրության կուրսային աշխատանքը չի թույլատրվում հանրային պաշտպանության ներկայացնել:

Աշխատանքները ստուգվում են *antiplagiat.ru* համակարգում:

Կուրսային նախագծերը պետք է լինեն օրիգինալ (բաղկացած լինեն՝ հեղինակային տեքստից, մեջբերումներից և ինքնամեջբերումներից):

Եթե «Անտիպլագիատ» համակարգի կողմից բացահայտվում են մեջբերումների ձևավորման տեխնիկական սխալներ, որոնք գերազանցում են 15 %-ը², աշխատանքը չի համարվում օրիգինալ և չի կարող թույլատրվել հանրային պաշտպանության:

Եթե համակարգն արձանագրում է փոխառությունների քողարկման փորձ ամբողջ աշխատանքում կամ դրա առանձին մասերում (կասկածելի, գեներացված տեքստ), ապա այն դիտարկվում է որպես աշխատանքի օրիգինալության պահանջների խախտում³:

Եթե համակարգը աշխատանքում ներկայացված մեջբերումը չի ճանաչում որպես հղում և այն ներկայացնում է որպես հեղինակի օրիգինալ տեքստ, կուրսային աշխատանքը համարվում է կասկածելի (գիտական մեջբերման ապարատի խախտմամբ):

1. Սահմանվում են ստուգման հետևյալ չափանիշները.

✓ **Իրավաչափ փոխառություն (մեջբերում)** — սեփական աշխատանքում օտար տեքստի մասի օգտագործում՝ հիմնավորված մեջբերման նպատակներով, հեղինակի և աղբյուրի պարտադիր նշումով (հղումով), որը ձևակերպված է սահմանված մեջբերման կանոններին համապատասխան: Թարգմանական փոխառությունների իրավաչափությունն ու ճշգրտությունը գնահատելիս ուշադրություն է դարձվում չափերտների առկայությանը, աղբյուրի հղմանը և աղբյուրի ընդգրկմանը օգտագործված գրականության ցանկում:

Ճիշտ ձևակերպված մեջբերման օրինակներ.


1. «Անտիպլագիատ» համակարգը որպես մեջբերում ճանաչում է չափերտներում գրված տեքստը, եթե՝
 - մեջբերումից առաջ նշված է մեջբերման հեղինակի լրիվ անունը կամ ազգանունը և անվան սկզբնատառերը, ինչպես նաև արտահայտություն նշող բառ (ասում է, գրում է, պնդում է և այլն).
 - մեջբերումից հետո հղում է առկա.

²Համընկնումը համարվում է ոչ ճիշտ փոխառություն:

³Կուրսային նախագծի խմբագրված տեքստը կամ աշխատանքի պատրաստման ընթացքում օգտագործված նյութերի՝ ԱԲ-ի միջոցով իրականացված թարգմանությունը «Անտիպլագիատ» համակարգի կողմից ճանաչվում է որպես կասկածելի տեքստ:

И. В. Курчатова **говори́л:** «Жизнь человека не вечна, но наука и знания переступают пороги столетий»²

2. Նորմատիվ փաստաթղթերից հղման օրինակ՝



3. Իրավունքի սկզբունքներին նվիրված մեկ այլ ժողովածույում նշված է. «Նորմերի և իրավունքի սկզբունքների կոլիզիայի դեպքում, որոշումը պետք է պետք է կայացնել՝ հիմք ընդունելով իրավունքի սկզբունքները, իսկ նորմերը պետք է քննարկել օրենքին համապատասխանելու տեսանկյունից: Նկատի ունենալով, որ հենց «սկզբունքներն» են հանդիսանում հիմնարար ակունքները, հիմունքները, առաջնահերթությունները և կողմնորոշիչները, որոնք օժտված են համընդհանրությամբ, ունեն սոցիալ-իրավական նշանակություն, ուստի դրանք կազմում են իրավական կոլիզիաների վերացման կառուցակարգի բովանդակությունը»⁴:

4. Օրինակ, Վ.Վ. Երշովն իրավունքի հիմնարար սկզբունքները դիտում է որպես անվիճելի իրավունք (jus cogens), որոնք պարտադիր են ինչպես իրավաստեղծ, այնպես էլ՝ իրավակիրառ մարմինների համար: Նա առաջարկում է Մահմանադրությունում և այլ օրենքներում ամրագրել ռուսական իրավունքի ձևերի հետևյալ հիերարխիան՝ իրավունքի հիմնարար սկզբունքներ, նորմատիվ

⁴ Антипов А.Н. Принципы, право, безопасность // Принципы права: проблемы теории и практики: Материалы XI международной научно-практической конференции. В 2-х ч. Ч. 2 (разделы V-X), М.: РГУП, 2017С. 280.

իրավական ակտեր, նորմատիվ իրավական պայմանագրեր և իրավական սովորույթներ⁵:

Կարևոր է, որպեսզի գիտական ղեկավարը դեռևս աշխատանքը գրելու ընթացքում ուսանողին բացատրի աշխատանքում պատշաճ մեջբերումների նշանակությունը, միաժամանակ զգուշացնելով ձեռնպահ մնալ չափից դուրս մեջբերումներից:

Ոչ ճիշտ փոխառությունը սեփական աշխատանքում օտար տեքստի որևէ մասի օգտագործումն է հիմնավորված մեջբերման նպատակներով, սակայն այն դեպքում, երբ իրական հեղինակի և փոխառության աղբյուրի նշումը (հղումը) ձևակերպված է սահմանված մեջբերման կանոնների խախտմամբ: Ոչ ճիշտ փոխառությունը չի հանդիսանում օտար ստեղծագործության (կամ դրա մասի) հեղինակային մտքի յուրացման փորձ, սակայն համակարգը նման տեքստը ճանաչում է որպես համընկնում, այլ ոչ՝ որպես մեջբերում:

✓ Ոչ իրավաչափ փոխառությունը (համընկնումը)՝ սեփական աշխատանքում օտար տեքստի ոչ իրավաչափ օգտագործումն է՝ առանց իրական հեղինակի և փոխառության աղբյուրի նշման (հղման) կամ հղման առկայությամբ, սակայն առանց նպատակային մեջբերման հիմնավորված լինելու: Ոչ իրավաչափ փոխառությունը դիտարկվում է որպես դիտավորությամբ իրականացված գործողություն՝ օտար տեքստը սեփականի փոխարեն ներկայացնելու փորձ: Այն հանդիսանում է գրագողության ձև և հեղինակային միտքիրավունքի խախտում՝ օտար ստեղծագործության (կամ դրա մասի) հեղինակությունը յուրացնելու միջոցով:

✓ Վերաշարադրումը (ռերայթ) մեթոդ է, որը կիրառվում է աշխատանքներում և ենթադրում օտար գաղափարների կամ հայեցակարգերի ներկայացում սեփական բառերով, մասնավորապես՝ նախադասությունների կառուցվածքի փոփոխում, բառերի հոմանիշներով փոխարինում, տեքստի հատվածների տեղաշարժում, բառաձևերի փոփոխություն և այլն: Վերաշարադրումները պարտադիր պետք է ուղեկցվեն հղումներով հեղինակի և/կամ աղբյուրի վրա:

✓ Ինքնամեջբերումը հատվածներ է, որոնք ամբողջությամբ կամ գրեթե ամբողջությամբ համընկնում են այն աղբյուրի տեքստի հետ, որի հեղինակը կամ համահեղինակը հանդիսանում է ստուգվող փաստաթղթի հեղինակը:

Եթե կուրսային աշխատանքը չի համապատասխանում օրիգինալության նկատմամբ ներկայացվող պահանջներին, այն չի կարող թույլատրվել պաշտպանության:

⁵ Ершов В.В. Теоретические и практические проблемы правового и индивидуального регулирования общественных отношений // Судебная власть: история и современность. Материалы третьей научно-практической конференции. Отв. ред. Ю.Ф. Беспалов. М.: Проспект. 2014. С. 70, 74.

ԿՈՒՐՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- Կուրսային նախագծի ծավալը սահմանվում է հետևյալ կերպ՝
- ✓ երկրորդ կուրսի համար՝ 18-20 էջ A4 ձևաչափով տպագիր տեքստ.
 - ✓ երրորդ կուրսի համար՝ 22-25 էջ A4 ձևաչափով տպագիր տեքստ:

Տառատեսակը Ghea Grapalat: Հիմնական տեքստի տառաչափը՝ 12, հղումների ձևավորման համար՝ 9–10, գլուխների և ենթագլուխների վերնագրերի համար՝ 14: Էջերը պետք է ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, աջից՝ 15 մմ, ներքևից՝ 20 մմ: Միջտողային հեռավորությունը՝ 1.5:

Էջերը համարակալվում են արաբական թվանշաններով, որոնք տեղադրվում են էջի ներքևի մասում՝ կենտրոնում, ամբողջ աշխատանքի ընթացքում շարունակական համարակալմամբ: Տիտղոսաթերթը համարվում է առաջին էջ, որի վրա համարը չի դրվում:

Յուրաքանչյուր հաջորդ գլուխը, եզրակացությունը, օգտագործված աղբյուրների ցանկը և հավելվածները սկսվում են նոր էջից: Վերնագրերը պետք է տպագրվեն կենտրոնացված, առանց պարբերության նահանջի և վերջակետի: Վերնագրի և հիմնական տեքստի միջև պետք է լինի մեկ դատարկ տող:

Մատենագիտական հղումները տրվում են յուրաքանչյուր էջի ներքևում (Footnote) և ունեն շարունակական համարակալում: Օգտագործվող աղբյուրից բառացի մեջբերումը վերցվում է չակերտների մեջ: Եթե մեջբերումը սկսվում է ոչ թե սկզբից կամ պարունակում է բաց թողնված հատվածներ, ապա այդ բաց թողումները նշվում են բազմակետով: Եթե մեջբերումը ավարտվում է մեջբերվող նախադասության ավարտից շուտ, այն նույնպես ավարտվում է բազմակետով:

Աշխատանքում հիշատակվող մեջբերվող հեղինակների անունները գրվում են հետևյալ հաջորդականությամբ՝ անուն, հայրանուն, ազգանուն, ապա ներկայացվում է համապատասխան մեջբերումը: Առանց բառացի մեջբերման ներկայացված տեսակետները, մտքերը և արտահայտությունները չեն վերցվում չակերտների մեջ, սակայն պարտադիր պետք է ձևակերպվեն էջատակի(Footnote) հղումներով:

Կուրսային նախագծի ձևավորման ընթացքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել օգտագործված աղբյուրների ցանկի ճիշտ կազմմանը: Այդ ցանկում նորմատիվ-իրավական ակտերը նշվում են պաշտոնական հրապարակման աղբյուրների հղումներով և, որպես կանոն, աշխատանքը գրելու պահին դրանցում առկա բոլոր փոփոխությունների և լրացումների նշմամբ: Աշխատանքի ընթացքում օգտագործված գիտական և ուսումնական գրականությունը ձևակերպվում է մատենագիտական նկարագրության ընդհանուր կանոններին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՍԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԱՄԲԻՈՆ

Ուսանողի ԱՆՈՒՆԸ, ՀԱՅՐԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ (ամբողջությամբ)

ԿՈՒՐՍԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԹԵՄԱ

Թույլատրված է պաշտպանության՝

_____ կուրսի ուսանող

_____ Անուն, հայրանուն, ազգանուն

Ամբիոնի վարիչ՝ (գիտական աստիճան,
պաշտոն)

Անուն, հայրանուն, ազգանուն

Գիտական ղեկավար՝

(գիտական աստիճան, պաշտոն)

Անուն, հայրանուն, ազգանուն

**ծանոթացել եմ աշխատանքին,
առաջարկում եմ պաշտպանության**

Երևան, 2026 թ.

Բովանդակության ձևավորման օրինակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նշանագրեր և կրճատումներ 3
 Ներածություն 4

Աշխատանքի տեսական մաս⁶

Գլուխ 1.

Գլուխ 2.

Աշխատանքի գործնական մաս

Եզրակացություն

Օգտագործված աղբյուրների ցանկ

Հավելված 1

⁶Գլուխների քանակը սահմանվում է հեղինակի և գիտական ղեկավարի համատեղ համաձայնությամբ:

Օգտագործված աղբյուրների ցանկի ձևավորման օրինակ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Նորմատիվ-իրավական ակտեր և պաշտոնական փաստաթղթեր

Մատենագիտական ցանկում նորմատիվ-իրավական ակտերը պետք է դասավորվեն հաջորդականորեն՝ 1) ըստ իրավաբանական ուժի, և 2) ընդունման ժամանակագրության. երկու դեպքում էլ նվազման կարգով:

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 1995 թվականի հուլիսի 5-ին և 2005 և 2015 թվականների փոփոխություններով) // ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118.
2. Constitution of the Federative Republic of Brazil 3rd edition Constitutional text of October 5, 1988, with the alterations introduced by Constitutional Amendments No. 1/1992 through 64/
3. Հայաստանի Հանրապետության օրենքը «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՕ-145-Ն // ՀՀՊՏ 2018.03.30/24 (1382).1 Հոդ.311.
4. Հայաստանի Հանրապետության Նախագահի 13.12.1991 թվականի ՆՀ-33 հրամանագիրը «ՀՀ Նախագահին առընթեր անվտանգության խորհրդի մասին», ՀՀԳԽՏ 1991.12.15/23 (1003) Հոդ. 535
5. Հայաստանի Հանրապետության Նախագահի 25.08.2008 թվականի ՆԿ-139-Ն կարգադրությունը «Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու և աշխատակազմի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին (կարգադրությունն ուժը կորցրել է 10.08.16 նկ-145-ն) // ՀՀՊՏ 2003.12.03/59(294) Հոդ.899

Մասնագիտական գրականություն (գրքեր, դասագրքեր, հոդվածներ)

6. Авакьян С.А. Размышления конституционалиста: Избранные статьи. – М.: Изд- во “Моск.Ун-та”, 2010., 560 с.
7. Аюева Е.И. Некоторые аспекты категории юридического факта // Правоведение. – 1985. - № 4., С. 67-71.

8. Առաջին աստանիդատարանի դատական ակտերի իրավաբանական բնույթը որակական կայունության ապահովման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում/Ս. Գ. Մեդրյան: Եր.: ԵՊՀ հրատ., 2020, 194 էջ:
9. Արսեն Թավադյան, Վինդիկացիայի և ռեստիտուցիայի հայցերի մրցակցությունը | ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ; գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան, Երևան, ԵՊՀ, 2017, էջ 243-251:
10. Միջազգային մասնավոր իրավունք: Դասագիրք /Ա.Հայկյանց. –Եր.:ԵՊՀ հրատ., 2010. – 560 էջ:

Ատենախոսություններ և սեղմագրեր

11. Зенкин И.И. Международно-правовое регулирование телекоммуникационных услуг в рамках ВТО: автореф. дисс. ... канд. юрид. наук. – М., 2010., 24 с.
12. Зенкин И.И. Международно-правовое регулирование телекоммуникационных услуг в рамках ВТО: дисс. ... канд. юрид. наук. – М., 2010., 13 с.

Դատական պրակտիկայի նյութեր

13. ՀՀ Սահմանադրական դատարանի 09.09.2008 թվականի ՍԴՈ-758 որոշում
14. ՀՀ Սահմանադրական դատարանի 26.06.2015 թվականի ՍԴՈ-1222 որոշում

ԻՆտերնետ-աղբյուրներ

15. Զավիդով Բ.Դ. Մենեջմենթը ՌԴ-ում [Էլեկտրոնային ռեսուրս]. 2001.No 12. URL: <http://www.meviz.ru/articles/2001/1432.htm>(Այցելության ամսաթիվը՝ 01.04.2021 թ.).